ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 02/2019

ք. Երևան «08 » «հունվար» 2019թ.

Վարչապետի աշխատակազմն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ՝ Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վահան Պապիկյանի, մի կողմից, և «Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ ի դեմս կազմակերպության տնօրեն Էդուարդ Խաչատրյանի (այսուհետ՝ Ստացող), որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունիսի 5-ի N 666-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի, 03 խմբի, 03 դասի 1136 ծրագրի 11005 «Սպասարկման ծառայություններ» միջոցառմամբ Աշխատակազմի համար նախատեսված **462 558 500** հազար դրամ (չորս հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր) սուբսիդիայի գումարը (այսուհետ՝ Սուբսիդիա) և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի 03 խմբի 03 դասի 1136 ծրագրի 11005 «Սպասարկման ծառայություններ» միջոցառմամբ նախատեսված **462 558 500** (չորս հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ Սուբսիդիայի գումարը ներառյալ ԱԱՀ-ն, որը տրամադրվող Սուբսիդիայի առավելագույն չափն է, Պատվիրատուն Ստացողին է տրամադրում ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական համամասնություններով, որի դիմաց Ստացողը պարտավորվում է տրամադրված ֆինանսական միջոցներն օգտագործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ 2019 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը, ՀՀ Կառավարական հետևյալ շենքերի և այլ գույքի սպասարկման ծառայություններ մատուցելու նպատակով (Աղյուսակ N1)՝

1.2 Աղյուսակ N1

N	ՀՀ Կառավարական շենքերի հասցեները	Անշարժ գույքի վկայագրերով ՀՀ Կառավարական շենքերի համար սահմանված մակերեսները (մ2)
1.	Հանրապետության հրապարակ, Կառվարական թիվ 1 տուն	25939
2.	Սարյան փողոց թիվ 22 շենք, 14-15 հարկեր	784
3.	Բաղրամյան 26	12560
4.	Բաղրամյան 24	2050
5.	Տերյան 89	1655
	Ընդամենը	**42988**

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Աշխատակազմը պարտավոր է՝

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, «ՀՀ Կառավարական շենքերի և այլ գույքի սպասարկման» ծառայություններ ծրագրով նախատեսված սուբսիդիայի հաշվին:

2.1.2. Պարբերաբար վերլուծել Ստացողի կողմից սույն պայմանագրի 2.3.6 և 2.3.7. ենթակետերով ներկայացված հաշվետվությունների և հանձնման-ընդունման ակտերի ցուցանիշները, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

2.1.3. Պայմանագրի շրջանակներում ծառայությունների մատուցման ընթացքում անհրաժեշտ աջակցություն և օժանդակություն ցուցաբերել Ստացողին:

2.2. Աշխատակազմն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, վերահսկել Ստացողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ անմիջականորեն չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2.Ստացողից պահանջել ներկայացնելու սույն պայմանագրի 2.3.6 և 2.3.7. ենթակետերով սահմանված հաշվետվությունները և հանձնման-ընդունման ակտերը կամ Աշխատակազմի գրավոր պահանջով այլ տեղեկատվություն:

2.2.3.Պարբերաբար վերահսկել սույն պայմանագրի 2.3.6 և 2.3.7. ենթակետերով սահմանված հաշվետվությունների և հանձնման-ընդունման ակտերի ցուցանիշների հավաստիությունն ու ճշտությունը:

2.2.4.Վերահսկել Ստացողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.4.5. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.3. Ստացողը պարտավոր է՝

2.3.1. Իրականացնել սույն պայմանագրի Աղյուսակ N1-ով սահմանված ՀՀ Կառավարական շենքերի և այլ գույքի ընթացիկ սպասարկման աշխատանքները՝ **42988** մ² ընդհանուր մակերեսով:

2.3.2 ՀՀ Կառավարական շենքերի և այլ գույքի սպասարկման ծառայությունների մեկ միավորի գինը՝ յուրաքանչյուր ամիս հաշվարկել, սույն պայմանագրի 2.3.7. ենթակետով սահմանված հանձնման-ընդունման ակտերում՝ Աղյուսակ N1-ով սահմանված ՀՀ Կառավարական յուրաքանչյուր շենքի սպասարկման համար հաշվեգրված ծախսերի և սպասարկված մակերեսի հարաբերակցությամբ (վարչական ծախսերը սպասարկված մակերեսների համար հաշվեգրված ծախսերում հաշվարկվում են համամասնորեն):

2.3.3. Ապահովել վերը նշված շենքերում տեղակայված պետական կառավարման մարմինների աշխատակազմերի շենքային պայմանների հետ կապված ընթացիկ աշխատանքները.

1) կատարել կապի միջոցների, ջեռուցման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, կոյուղու, էլեկտրատեխնիկական սարքավորումների և ապարատների, վերելակային տնտեսությունների ինժեներատեխնիկական սպասարկում,

2) Աշխատակազմի պահանջով կատարել Կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող այլ աշխատանքներ:

2.3.4. Ներկայացնել Աշխատակազմ սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող «Սպասարկում» ՊՈԱԿ-ի 2019թ. նախահաշիվն ու հաստիքային ցուցակը (կցվում է):

2.3.5. Աշխատակազմի առաջին իսկ պահանջով ներկայացնել աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.3.6. Ստացողը աշխատանքների կատարման մասին եռամսյակային հաշվետվությունները ներկայացնում է Աշխատակազմ՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 15-ը, իսկ տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թ. ապրիլի 1-ի N 176-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. փետրվարի 4-ի N 104-Ն և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. մարտի 28-ի N 324-Ն հրամանների ձևերին համապատասխան:

2.3.7. Ստացողը՝ առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-րդ կետով և «Հանձնման-ընդունման ակտի ձևը և դրա լրացման պահանջները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի թիվ 346-Ն հրամանով հաստատված հանձնման-ընդունման ակտի ձևով, յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը, Աշխատակազմ է ներկայացնում հանձնման-ընդունման ակտ և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային հաշիվ:

2.3.8. Սույն պայմանագրի 2.3.7. ենթակետով սահմանված հանձնման-ընդունման ակտը պետք է պարունակի՝ սույն պայմանագրի Աղյուսակ N1-ով սահմանված յուրաքանչյուր ՀՀ

Կառավարական շենքի, այդ շենքի սպասարկված մակերեսի, հաշվեգրված ծախսերի և սպասարկման ծառայությունների մեկ միավորի գնի վերաբերյալ տեղեկատվություն:
2.3.9. Հաշվետու տարվա վերջին Աշխատակազմին վերադարձնել սույն պայմանագրով հատկացված գումարի չծախսված մասը:

2.4. Ստացողը իրավունք ունի՝
2.4.1. Իր կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Աշխատակազմին:
2.4.2 Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրի 1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Աշխատակազմը Ստացողին է հատկացնում տարվա կտրվածքով **462 558 500** (չորս հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:
3.2.Սույն Պայմանագրի 3.1 կետում նշված գումարը Ստացողին վճարել անկանխիկ յուրաքանչյուր ամիս:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	ՍՏԱՑՈՂ
«Վարչապետի աշխատակազմ»	«Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպություն
Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ կառավարական N 1 շենք	Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ կառավարական N 1 շենք
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022135	Հ/Հ 900018005125
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 02568463
_____ Վահան Պապիկյան	_____ Էդուարդ Խաչատրյան
Կ.Տ.	Կ. Տ.